# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Իրինդ, հեռ 098-34-39-09, irind.aragatsotn@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 42

### ԻՐԻՆԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի մայիսի 12-ի թիվ 05-Ն հարամանը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1) Հաստատել Իրինդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը համաձայն հավելված 1-ի:

2) Հաստատել Իրինդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը համաձայն հավելված 2-ի:

3) Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 22.02.2009 թ. թիվ 2 -Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՐՍԵՂ ՀԵՔՈՅԱՆ

20 16թ. ________
գ.Իրինդ